

# ՇՄԱՍԹ

ՊԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Երևանի համար 10 Ձր.  
Վեցամսեայ 5 »  
Երասանկանի համար Տարեկան 12 »  
Վեցամսեայ 6 »  
Ալեքիկայի համար Տարեկան 2.50 Տր.  
Վեցամսեայ 1.25 »  
ԿԱՆԻՅԻԿ ՎՃԱՐՆԵՐԻ

Մանուգեան տղր առաջին երեսին համար 40 ասեթիլ հ. իսկ վերջին երեսի համար 20 ասեթիլ հ. երեքին ասեթիլ անգլաներու համար 20 Օլո գեղը կըլլայ :

Նախկ ե գրաւ գրկի  
Խմբագրութեան արդիւն  
R. P. Kalemkarian  
Redaction du journal  
«Charjoun»  
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇՄԱՍԹ ՕՐԵՐԸ

Գրութիւնք եւ չին տրուիր

( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )



Հեռագիր, 6 Ognusnu

## ՄԱՀԱԳՈՅԺ

Այսօր առաւօտեան ժամի 10ին երկար հրանդուածնէ վերջը իր հոգին աւանդեց մեր ամենասիրելի և յարգուած ընկերուհին— Տիկին Վերոնիկ Սէրէմեան :

Տիկին Վերոնիկ բառին բուն նշանակութեամբ հայրենասիրուհի մըն էր և ճարքէի անգամահիները քաջաբերող և յառաջ մղող դէպի հայրենասիրական գործունէութիւն :

Այժմ մեզ կը մնայ յարգել, սիրել անոր յիշատակը և շարունակել անոր սիրած գործը մեր անկեղծ արտասուքը խոստովանել անոր ընտանեաց արցունքի հետ :

Ֆիլիպէի Կանանց Ընկ. ՇՄԻ:

## ԹԵՏԻ ԼՈՒՈՒ ԲԱՅՑ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ

Մեր զուտ յեղափոխական կեանքի մէջ մի անսակ լուծութիւն է տիրում, գրեթէ երկու տարի է ինչ յեղափոխականների կողմից ոչ մի նախադրածակ ընթացում տեղի չէ ունեցել : Գործին անտեղեակ հայը կարող է կարծել որ հայ յեղափոխութիւնը ընկճված ու վիժված է և այդ երկարատեւ լուծութիւնը ոչ մի արդիւնք չունեցաւ երկրում տանջվող ժողովրդի վիճակը բարելաւելու տեսակէտով :

Մեր հակաօրինակական տարրեր, որ Սուլթանի ատելութիւնը վերագրում էր միմիայն յեղափոխական շարժումներին, իր կուրացած աչքերով տեսաւ որ Սուլթանը և իր աշակերտները այսօր էլ նոյնչափ ատում են խաղաղ և իր անանջանքների մէջ մոլորված հային, որչափ երկու երեք տարի առաջ, մեր յեղափոխական շարժումների մի-

ջոցին և նոյնչափ տրամադիր են ծծել մեր արիւնը, որչափ մենք համակերպում ենք մեր ստրկական վիճակին :

Յեղափոխականները լուծեցին, խօսքս բուն երկրում գործողների մասին է, և ինչպէս երեւում է դեռ պէտք է լուծել : Հասկանալի է որ այդ լուծեան պատճառը ոչ Սուլթանին փորձելն է, ոչ թուլութիւնը և ոչ էլ հայ պահպանողականի սիրտը գրաւելը : այլ այն, որ ժամանակը հիմա տարբեր պահանջներ է գրել հայ յեղափոխականի առջեւ : պատճառը ինքը հայկական յեղափոխութիւնն է որ նախնական անհրաժեշտ ազմկալի քայլերը անելուց յետոյ՝ այսօր ձգտում է երեւան գալ աւելի շուրջ և աւելի վճռողական կերպով : Մի կողմից, մեր յեղափոխութիւնը այսօր լուռ, բայց գործում է, և անընդհատ յառաջ մղվում դէպի իր կէտնպատակը :

Բայց մինչև երբ պէտք է տեւէ այդ խորհրդատու լուծութիւնը, երկու տարի առաջ յեղափոխութեան դէմ գրգռուած հայ տարրն անգամ ձանձրացել է այդ միտտեսակ ճնշող լուծութիւնից : Իսկ յեղափոխութեան միշտ համակիր անհամբեր տարրը և տանջվողը յուսահատական գրգռված գրութեան հասած, կենդանի գործ, ցնցող, կենդանութիւնը ապացուցող փաստ է պահանջում :

Մեր կարծիքով այս լուծութիւնը կը տեւէ այնքան, որքան հանգամանքները թոյլ կըրան, որքան գործը կը պահանջէ : Բաւական է որ ժողովուրդը և յեղափոխութեան համակիր տարրը համոզված լինեն որ յեղափոխութիւնը կայ և պէտք է յարատեւի, մինչև որ մենք հասնենք մեր ցանկալի նպատակին :

Յեղափոխականները լուռ են, բայց գործում են : նրանք գործում են բուն երկրի մէջ, ժո-

ղովրդի ծոցում, թուրք դահլիճների քթի տակ՝ իրանց կեանքերի հետ խաղաղով ամէն զոհողութիւն յանձն առած :

Նրանք գործում են լուռ ու մունջ, անհամբեր սպասելով այն վայրկեանին՝ երբ մեջացած բերանները կը պայթեն անարկու որոտումով :

Մենակ, անօգնական չը թողնենք այդ լուռ և անտանելի պայմանների մէջ գործող անձնազոհներին, և թէ իսկապէս ցանկանում ենք ազատ լինել :

## ԳՊՐՈՑՆԵՐՈՒ ԵՈՒՐԸ Ա.

Ապացուցուած ճշմարտութիւն մըն է որ մեր վարժարաններու մեծամասնութիւնը իրենց այժմեան «պատուելիական» ուղղութեամբ շատ անհամապատասխան է ներկայ նոր դաստիարակութեան պահանջներուն : Մեծ վախ կայ որ անոնց ամուլ ու խնդրուած ծրագիրներով վտանգուին մեր ապագայ յոյսերը : Մամուլը մասամբ մը իր պարտքը կատարած կը համարի անխնայ մտրակելով թէ հոգաբարձուն և թէ վարժապետը, բայց այս անհատներու վերագրուած յանցանքներու լոկ մատնանիշումը դարձան մը չեն ըներ բուն վէրքը բուժելու : Իրապէս, մեր դպրոցներու հակողութիւնը ու վերակացութիւնը յանձնուած է այնպիսի անձներու խնամքին, որոնք բառին բուն նշանակութեամբ «անգիր» և ամենատարակաւն զարգացումէ զուրկ են, բայց «աղա» ըլլալին բաւական է եղած զիրենք պաշտօնի կանչելու : Ուսուցիչները մեծ մասամբ ատճկաստանցի և օրինաւոր ու դասական ուղղութեամբ շրջան մը աւարտած չեն : միայն հայերէն գիտեն որ իրենց միջավայրի մէկ շնորհքն է, և ֆրանսերէնի միջանի կոտորուքներ իրենց զարգացումը կը լրացնեն յաչս ժողովրդեան : Միջանկեալ կերպով պէտք է յիշել որ շատ սխալ հա-

մոզում մըն է օտար լեզու թութովը ինտելիգէնը և զարգացած համարել : Լեզու սորվելը ընդունակութիւն մըն է, որ ուսման և կրթութեան հետ չէ կապուած : Իսկ զարգացումը, այսինքն մտաւոր պաշարը գիտութեան բազմակողմանի ճիւղերով հարստացնելը արտաքին աշխարհին հետ ծանօթութիւնը, աստիճանաբար և որոշ ուղղութեամբ կըլլայ : հոս տարիները ու աշխատանքը իրարու հետ կը մըրցին :

Բայց մօտենանք բուն վէրքին : Ի՞նչ է պատճառը որ մեր երեխաները իրենց մեղուական աշխատութեամբ և սուր ընդունակութիւններով միշտ ետ են մնացել ու կը մնան : Գնենք մեր դպրոցներու ուսման ծրագիրները, և վեր աւենք նախակրթարաններու շրջանը : հոն պիտի հանդիպինք այնպիսի առարկաներու, կուտակուած դասական նիւթերու, և օտար լեզուներու որոնք ահագին անկրելի բեռնն ոչ միայն անչափահասներուն, այլ նաեւ չափահասներուն :

Մեր երեխաները խանդով կը վազեն հոն, և իրենց զուարթ, մանկական միտքը փոխանակ կըրթելու կը թողնին և կը թուլնայ : Մնողքները կը զգան որ իրենց երեխաներու հոգեկան և մտաւոր աշխարհը բոլորովին կայաւոր փոխուի հոն, բայց չեն գիտեր պատճառը : Հրապարակային քննութիւններէն մարդը յանկարծ կը հիասթափուի և կը տեսնայ որ իր տղան բանաստեղծական կտոր մը կամ ֆրանսերէն ոտանաւոր մը կարտասանէ կը մխիթարուի : Ահա շարիքին ամենամեծը, տարեկան քննութիւնները ու պարգեւաբաշխութիւնները ուսուցիչի ծուլութիւնը ու անհմութիւնը պահելու շատ նպաստած են, և յետոյ «քաջալուսներու» տարափը խեղճ ճնողքները բոլորովին կը հմայեն : Այս երեւոյթները այնքան սովորական են, որ աւելորդ կը համարիմ մի առ մի թուել այն բարոյական զեղծումները ու անխիղճ պատրանքները, որոնք

տարիներով մեր գայրոցներուն մէջ ահա՜ստ են :

Միակ միջոցը—ընդհանուր շարժար արմատախիլ ընելու և խոչար արգելքները վանելու—կը կայանայ նախակրթարաններու կազմութեան համակարգի փոփոխութեան մը մէջ : Արտահանուող նախակրթարանը պէտք է գնէ այն զորքերը հիմը, որուն վրայ պիտի բարձրանայ ետքէն սերունդի դատարարական թիւերը :

Աստի կառավարիմ, կարող ուսուցչի շնորհիւ ու գրագէտներու ընդհուպ ձեռնարկել ընդհանուր միջոցներով ծրագրի մշակմանը, ամբողջ Պուլկարիոյ հայ գայրոցներուն համար իրենց ուղեցոյց առնելով պուլկար գայրոցներու ծրագիրը, որ գերմանականին հետեւութեամբն է պատրաստուած : Միայն չմտնալ աչքի առաջ ունենալու մեր սեպական հանդամանքները, որ պուլկարահայի մտաւոր և անասական պայմաններուն զոհացում ապա : Վասն զի մեր մանուկները հայ միջնորդութիւններէն զերկուսով են, մայրենի շունչը որ անոր ազգայնական զգայունքները պիտի թրթռացնէ, առհասարակ «թուրքերէն» է : մասալ երակները օտար լեզուի խոյթ հնչելէն հայ արեան վեհութիւնը կը կորսնցնեն : չկայ ընտանեկան բարոյական կրթութիւն որով մայրը կարող ըլլայ անոր մատուցել հոգիին մէջ սերմանել ցեղային ազգայնական թիւերը, արժարժեք հայրենիքի, պարտքի ինքնաճանաչութեան գաղափարը : Ասոր համար մեր ուսուցչի շնորհիւ գերը խիստ

ծանրակշիւ և պատասխանատու է : սերունդի մը մտքին ու հոգիին մարդիչը պիտի ըլլան անոնք, «արհեստական հայէն», կատարիալ հայ» պատրաստելու (խօսքս Պուլկարիոյ վրայ է) :

8.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ . 21 Յունիս

Մեր ինտելիգենտները մասին խօսելու առիթը քանիցս ներկայացել է և ազնիւ ընթերցողը բաւական զազափար ունի կազմած նրանց վրայ : Այժմ ուզում եմ նրանց մի նոր նմայնը տալ : Գաւառ-փոխութիւնը կարծես մտաէ գարձել Պարսկաստանում : ստեղծելու ինչու մեղադրել մեր խնդն ու սղէտ գիւղացուն, որ ծանրուանտանելի հարստահարութիւններէն ճշուած ուղում է ուսողական լինել, երբ որ մեր ինտելիգենտ համարուածներն էլ մի փոքր վիրաւորանքով և կրքի պատճառով ամէն օր դաւանափոխութիւն են գիւրում : երէկայ դաւանածն այսօր ուրախում, երէկուայ պաշտածն այսօր ատում են : իհարկէ առանց բանար և արդարացի պատճառի : Վիրաւորութեամբ մի անհատից, գաւառում են թշնամի մի ամբողջ կուսակցութեան, հայհոյում են այն կուսակցութիւնը, որին պատկանում է այդ վիրաւորող անհատը . . . : Տարօրինակ տրամաբանութիւն :

Այս իրողութիւնը, պարզօրէն ցոյց է տալիս նրանց կամքիք և առողջ համոզմունքից զուրկ ա-

րարածներ լինելը : նրանց, որոնք գեռ երէկ «կամքի զարգացման պայմաններն» մասին երախտական ճառեր էին խօսում (անշուշտ առանց հասկնալու և այս կամ այն հեղինակից գողանալով) . . . : Հաւատացէ՛ք, սրանք են մեր ինտելիգենտ համարուածները, սրանք են մեր պարծանքի առարկայ գաւառաւոր սրանք են, որ հայ հասարակութիւնը բարձրացնելու փոխարէն փճացնելու են, իրանց յեղեղով «կարակոտէր»ով :

Գերմանիայում հայերին օգնող գովա. Լէրցիոս վերջերս էջմիածինից Խոյ հասաւ, որտեղ բացած ունէր մի հայկական սրբանոց պատար Բէրզմանի տնօրինութեան ներքեւ : Այդ սրբանոցը վերջերս պարսիկների յարձակումներին առարկայ էր դարձել : պարսիկ յուղուրդը գրողուած Բէրզմանի հակառակորդ մի պաշտօնեայից, ուղում էր յարձակում գործել սրբանոցի վրայ : Բէրզման այդ միջոցում Խոյից բացակայ լինելով, իրա հայ փոխանորդը, պատահելիք ծանր դէպքերից վախենալով, խնդն որբերը փոխադրել էր Ուրմիա :

Գովա. Լէրցիոսի ազդու բողոքների շնորհիւ որբանոցը կրկին փոխադրուած է Խոյ : Գովա. Լէրցիոս այժմ ճանաչ պարհորդել է դէպի Վան, և այնտեղից անցնելու է Ուրֆա, Տիարաքէրի, քննելու համար իրա հսկողութեան և խնամքին

ենթարկուած այն տեղերի հայկական որբանոցները : Հայկական ենք ստում նրա համար, որ այդ որբանոցները բացառաբար հայերի համար են բացուած, թէեւ կառավարվում են գերմանացիների փողով և հետեւաբար ընդհանրապէս կոչվում են «գերմանական որբանոցներ» :

Գովա. Լէրցիոս Տաճկաստանից կրկին վերադառնալու է Պարսկաստան և Թաւրիզի վրայով ճանապարհով գնալու է Գերմանիա :

Բարի ճանապարհ . . . : ՄԻՐՁԱ

Րուսոյի . 1 Օգոստոս

Այս առաւօտ, կիրակի, քաղաքիս երկրաստորդութեան ըստուար մեծամասնութեան կողմէ պարոն մը, տեղույս առագ քահանային հետեւեալ նամակը կը յանձնէ թաղական խորհրդարանի մէջ՝ ի ներկայութեան թաղական խորհրդոյ ինքնընտիր անդամներուն :

Արժանապատիւ Հայր Եւ Տիար Ասենապետ Պատ. Թաղ. Խորհրդոյ

Քաղաքիս Հազար անգամներ յերկրորւած ծանօթ պատճառներով Պոլսոյ անարժան Պատրիարքի անունը հարկ կը որ ցարդ ձեր կողմէն ինքնաբերաբար չյիշատակուէր մեր Ս. եկեղեցւոյ պատարագի վեճի խորհրդի ժամանակ :

Բայց նկատելով որ՝ դուք, թիբիս իրբիս պաշտօնական մարմին, ցարդ նախաձեռնութիւնը չունեցաք այդ քայլին՝ մենք հայ երկրաստորդներս կը պահանջենք ձեր արժանապատուութիւնէն և ձեր մեծագոտութիւնէն որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՍԻՐԱԿԱՆ ՏԱՃԿԱՑՄԱՆ ԵՆՈՐ ԿԱՌՈՒՑՈՒՄԵՆԻ ԵՐԿԱՐՈՒՂԻՆԵՐԸ

Սերոպական գրամագլուխը խիստ է աճած : Անոր կիրարկութիւնը իր հայրենիքին մէջ քիչ մը ձեռնտու պայմաններով անհնար է : Ու գարէ մը ի վեր Սերոպական ազգ՝ ու շահախնդիր գրամագլուխը զուրս է ելած իր հայրենիքէն՝ որս, սոկոս, շահ, կողոպուտ կորոնէ հողագունդի ամէն անկիւններուն մէջ : Աֆրիկէի մէջ ծակ մը չէ միացեր ուր անիկա իրեն քիթը մտցուցած չըլլայ : Երգիպոստ, Թրանսօլա, Գոնիօ, Կվիանա, Բարեյուսոյ հրուանդան, Նիանաս, Եթովպիա, Ալժէր եւ այլն են : ամէն տեղ Սերոպական տիրապետութիւններու Սերոպական գրամագլուխի գործարքութիւնը միացած է ամենուն անիկից՝ ընչաքաղցութեան, շահագործութեան ու բռնութեան հետ :

Ներկայ դարուս բոլոր պատերազմները և քաղաքականութիւնը կը պտտի միայն ու միայն մէկ տեսակետի մը շուրջ. անանկ ընել, որ մայր երկրի աղբիւններն ու գրամագլուխը աւելի շահաւոր կերպով

տեղաւորուին :

Արեւելեան խնդիր, ծայրագոյն արեւելքի հարց՝ ամէնն ալ ատոր շուրջը կը պտտին :

Չինաստանի խնդիրը ամէնու համար պարզ է. մէկը Թաւրիզ-Վանը խից, որ իր պաճառականութիւնը առաջ տանի. միւսը Պորտ-Արդուրը յափշտակեց. որ իր դրամագլուխները հոն շահագործէ . . . ամէնքն ալ երկաթուղիներու նոր-նոր մենաշնորհներ կը կորզեն Յունգուլի-Իւմէնէն . . .

Տաճկաստանի և Սերոպայի յարաբերութիւնները վերջին դարուս մէջ ինչ են եղած, եթէ ոչ ազան վաճառականի մը և խեղճ շահագործողի մը յատկանական մաքառումները :

Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, Աւստրիա, Իտալիա . . . վերջերս ալ Ռուսը՝ ամէնն ալ գրամատէր և գորաւոր, իսկ թուրքը հարուստ բայց անմշակ երկրով, անխելք, կիսաբարբարոս և թոյլ պետութիւն մը, ու ամէն տեղէն ելլող թաթը խոթեր, իւզոս պատառ մը իւրացուցեր է :

Խոչոր անտեսական ձեռնարկ մը մը չկայ որ թուրքի մը մենաշնորհն ըլլայ : Հոս ծովերու փարսաներու մենաշնորհն է, հոն ծովախերու, այլ տեղ մը ծխախոտի րէժիմն է, ուրիշ տեղ մը աղի, մետաքսի, հանքերու,

ոգելից ըմպելիներու, ձկնորսութիւններու եւ այլն եւ այլն . . . ամէնն ալ մենաշնորհումներ են 33, 60, 99, տարիներով . . . ամէնն ալ Եւրոպացիներու ձեռքը : Մինչեւ իսկ մայրաքաղաքի քաղաքները (գրամուէյ) Բոսֆորի նաւազանցութիւնը (չիրքէթի ընկերութիւնը), Մինչեւ իսկ պետական պանքան (Պանք-Օթոման) . . . ամէնն ալ Սերոպական գրամագլուխներ են :

Ուր կը նայիք՝ ամէն տեղ Սերոպական գրամագլուխը կը տեսնէք : Մեծ ու փոքր վաճառականութիւնն ալ իրեն կարգին :

Չարաչար կը սխալիք, եթէ վայրկեան մը երեւակայէք որ միայն հասարակ գրամատէրեր են գործին մէջ մաս ունեցողները . . .

Պիղմարք պղտիկ զազան մը չէր, ամէն հայ անգամ գիտէ անոր անունը : Աղէկ, այդ իսկ Պիղմարքը որ մը ի լուր աշխարհի հրատարակեց, որ «ամբողջ հայկական խնդիրը բոմբարանցի ձեր զինուորի կաթիլ մը արիւնը չարժեք» . . . Խոչ կը կարծէք՝ ո՞վ էր անոր բերնով խօսողը : Չէ՛, չէք կրնար գուշակել, զժուար է :

Անոր բերնով կը խօսէր Պիղմարքին երկաթի քանցէրին ունեցած քանի մը միլիոն գրամագլուխը Տէյուներ-Ումուիէին (հանրային պարտուց) մէջ : Ու ետքէն մենք կը զարմանանք, որ Պիղմարք մը դէմ էր հայերուս փրկութեան խնդրին :

Պրպտեղք ու զուք պիտի գտնէք անգլիական փառամէնտի թրքաւոր անդամ Աշմէթ Պարթէթին գրամագլուխներն ալ թուրքիոյ մէջ են տեղաւորուած : Հանօթօ, Նէլիտօֆ և հարիւրներով մանր ու խոչոր «քաղաքագէտներ» կը պաշտպանեն թուրքիան, որովհետեւ այլ տեսակ չեն համարձակել վարուել, իրենց սեփական միլիոնները կը կորչին Տաճկաստանի կորսուելովը :

Մեծ պետութիւններու վարչական մարմինները կազմուած են անհասանելի և այդ անհասանելի միլիոններ ունին թուրքիոյ մէջ : Թուրքիոյ զոյութիւնը անոնց գրամագլուխներու համար անհրաժեշտ է. և պետութիւնները կը ձգտին անոր ամբողջութիւնը պահպանել :

Սերոպական ամէնակեր գրամագլուխը եակա՛ր ատենէ ի վեր իր ազան աչքը տնկած է Ասիական թուրքիոյ երկաթուղիներու վրայ : Նոր հարց մը չէ ասիկա : Արդէն Պոլսէն Գոնիա, Պոլսէն Գաղատիա, Իզմիրէն Էսկի-Շէհիւր, Էտէմիշ եւ այլն զիծեր կան : Միւս կողմէն զիծեր կան նաեւ Միսիսիէն Ատանա, Ետֆայէն Երուսաղէմ եւ այլն : Բայց զժուարիքը առաջին քայլն է : Եւրոպական գրամագլուխը, խիլով այդ մենաշնորհումները՝ չէր կրնար գաղար առնել :

յետ այնու ինչպէս արտասահմանի գրեթէ բոլոր հայ եկեղեցեաց մէջ, նմանապէս սեղուոյս եկեղեցիին մէջ դագրի յիշատակութիւնը այն անձին որ իր կրկնակի վատ գործերով արատ կը բերէ հայ անուան :

Մենք սքողուածներ չենք, հանգամանքներու պատճառաւ ստորագրած չենք այս սողերը. եւ իհարկին ճակատարաց ատեան գալ պատրաստ ենք :

Որդիական յարգանք  
Կարգադիր մասնախումբ  
Րուսչուք, 31 Յուլիս

Տէր պապան նամակը կարգաւ յետոյ արհամարհանքով կը մերժէ ու է նպաստաւոր տնօրինութիւն ընել, թերեւս մտածելով որ «մէկ երկու սրիկաներու գործը եղած ըլլայ» :

Բայց այդպէս չէր. «կարգադիր մասնախումբ» ստորագրութիւնը երկտասարգութեան որոշ մէկ մասը կը ներկայացնէր. դասակարգ մը որ գիտցաւ հաստատուն կամքով Րուսչուքի հասարակութիւնը ինչպատ Հայաստանի սովետոյ հանգանակութեան և Լահէի վեհաժողովին համար միթիւնկի մը կազմակերպութեան մղելէ զատ՝ ուրիշ առիթներով Րուսչուքի իրօրուան սարտականութիւնը յիշեցնելով գործադրել տալ :

Եւ ճիշդ այն ժամանակ, երբ պատարագիչ քահանան Օրման փաշայի անունը պիտի յիշատակէր, ահա «չը յիշուին» երբ ուրտընդոստ ձայն մը եկեղեցւոյն կամարները կը խլացնէր :

Քահանան ժողովրդի այն ազդու պահանջքն սահմակած ինքզինքը... շնորհեսցես ընդ երկայն աուրս ուղիղ վարդա-

պետութեամբը գտաւ :  
Եկեղեցւոյն բակը ծերուկ ջոջ մը կը գոչէր նորընտիր ! Թաղականներուն «պէ՛ աղբար, քանի որ չեն ուղեր, մի՛ յիշեցնէք սա մարդուն անունը, որպէս զի մեզի հանգիստ ձգեն» :

Եւ ահա այս կերպով Րուսչուքն ալ կը մասնակցի բարոյական այն մեծ պատժոյն՝ զոր արտասահմանի հայութիւնը գրեթէ միաձայնութեամբ տուաւ իր մէկ անարժան անդամին :

Բայց իմ կարծիքով «կարգադիր» անդամները այսքանով գործը վերջացած չի համարելով պարտաւոր են մի ու եւ ժամանակ հսկել իրենց արդար պահանջքին գործադրութեանը վրայ, մինչեւ որ չյիշատակութիւնը սովորական դառնայ ամէնուն համար ալ :

### ԵՈՒԱԶԱՅՆԸ

Իրաւ է որ մեր եկեղեցին դարերէ ի վեր պահած է իր միաձայն երգեցողութեան աւանդականութիւնը, սակայն աւսնդականութեան մեր մէջ այնքան անխախտ մնալը՝ այսօրուան մեր ստուած եռաձայնին արգելք մը չէր բնականաբար :

Երբ բաւական ատենէ ի վեր անսնուած է որ օտար եկեղեցիները թողնուի միաձայն երգեցողութիւնը, երկձայնի, եռաձայնի և քառաձայնի վրայ կազմակարգուած են, զանոնք աւելի հեշտալուր ընելու փափաքով, մեր եկեղեցին ալ մանաւանդ այս վերջին

տարիներս ուզած է համակերպիլ եւրոպական օտար եկեղեցիներուն :

Նախ գիտնանք թէ՛ ի՞նչ պատճառաւ խողմնաձայն երգեցողութիւնը շատ ուշ մուտ կը գտնէ մեր մէջ :

Ա. Մեր արարողութեանց եղանակները իբր արեւելեան «թիւբեր» շատ դժուար բարեփոխում կրնային ընդունիլ, քանի որ ու է արեւելեան եղանակ՝ սոսկ միաձայնի վրայ կերպով նուագախմբերու քով, այս վերջինները սրբան ալ բազմաթիւ նուագներէ կազմուած ըլլան :

Բ. Մեր ժողովուրդը իբր չափազանց նախանձախնդիր հանդէպ իր եկեղեցական աւանդութիւններուն, զինքը՝ վարժուածէն մազի չափ իսկ շեղեցնել չէր մտածուած. անիկայ ծնած ատենը միաձայն լսած էր, հետեւաբար պէտք կը լլար նոյնը յանձնել իր յաջորդին :

Կ. Ազգերնու մէջ, մեր եկեղեցական եղանակներուն ներքնապէս ծանօթ է կարող երաժիշտներու թիւը բաւական նուազ ըլլալուն, բազմաձայնի մը իրականացումը միշտ դժուար կը մնար : Երբ այդ երաժիշտներուն թիւը ստուար ալ ըլլար, դարձեալ նոյն բանն էր ըլլալիքը, քանի որ մեր մէջ օտարներուն նման դպիրներուն վճարել սովորութիւն չէր եղած : Եւ առանց վարձատրութեան ո՞վ կաշխատի :

Վերջապէս մտածուած է որ երբ երկար աշխատութենէ մը յետոյ մեր երգեցողութիւններն ալ բազմաձայն ըլլային, ո՞ր բաձարցակ իշխանութիւնը պիտի

կրնար զանոնք ամէնքին մէջ ներմուծել :

Վերոգրեալ պատճառներէն աւանագլխաւորը՝ որ մեր երգեցողուն իբր արեւելեան եղանակներ փոփոխութիւն չեն կրնալ ընդունելու կարծիքն էր, վերջերս մի քանի ճարտար երաժիշտներու կողմանէ հարթուած է. խոստովանելով որ մեր եղանակներն ալ բազմաձայնի վրայ շատ լաւ կըրնային թափուիլ, մանաւանդ երբ այս վերջիններուն պէտք եղած մանր մունր ձեւափոխութիւնները տրուէին :

Արդ՝ գիտնալով որ այսօր մի քանի տեղեր, ինչպէս էջմիածին, Երուսաղէմ, Չմիւռնիա ևն. յալոյցած են բազմաձայնի վրայ երգել և թերեւս ճիշդ այն եղանակաւ ինչ որ մեր Վառնայի դպրաց դասը լսել տուաւ ժողովուրդին, փափագանք և յօժարութեամբ յանձն առինք եռաձայնի դժուար գործին ձեռնարկել, հաւատալով որ մեր ըրածը աւելի գեղեցիկ և աւելի հեշտաբար պիտի գտնէր ժողովուրդը. առանց սակայն վայրկեան մը մտքէ անցնելու որ կրնար գրտնուիլ Պ. Նարտի մը որն որ զեղարուեստին գէմ իբր հայհոյանք նկատէր մեր աշխատութիւնը : Է՛հ ինչ ընենք, թերեւս Պ. Նարտի իր Աստուծոյ ընդունած գեղարուեստական յատուկ ականջ ու ձիրքով՝ կարողանայ հակիթին մէջէն մազը փնտռել, գտնալ ու զատել : Մեր պարզ ու սովորական ականջները աւելի հեշտալուր կը գտնեն կիրակնօրեայ եռաձայնը, քան թէ հին միաձայնը : Կերեւայ թէ՛ Պ. Նարտի միայն

Անգլիական, Տրանսական եւ Գերմանական դրամագլուխներն են որ երկաթուղիներու դիմակ են հագնող Փոքր-Ասիոյ ծովուն մօտ մասերուն մէջ ու կը ծծեն թէ տածիկ կառավարութիւնը, թէ մանաւանդ անգլիական ազգաբնակչութիւնը :

Հիմակ խնդիրը մեծ ծաւալ պիտի ստանայ, եւ հոս վերջնական համաձայնութիւն մը կայացնելը բաւական դժուարին գործ մըն է շահախնդիր դրամատէրներուն ու անոնցմէ հազար անգամ աւելի շահախնդիր քաղաքադէտներուն համար :

Մինչեւ այժմ եղած գիծերը Ասիական Թուրքիոյն էն չնչին եւ միջակ բարեբեր մասերու մէջն են : Հիմակ դժուարին ճիշդ կը թափուին իրօր ձեռքէ խելու Պօլիս-Պաղատ-Պասսօրահի գիծը :

Մէկ կողմ նետենք զիւրանագիտական կոնիւնքը եւ քննենք հայկական սեւակէտէն ներկայացուած քանի մը ծրագրերնրը :

Դեռ 60ական թուականներէն խումբ մը անգլիացիներ առաջարկութիւն կընեն իսկէնտէրունէն գիծ մը անսիլ Պաղատաւ եւ Պասսօրաւ. ասով անգլիական դրամագլուխը զիւրացուցած կըլլար եւ Հնդկաստանի յարաբերութիւնը, եւ շահագործած ամբողջ Միջագետքի բարեբեր դաշտերը :

Աս գիծը, հայու մը սեւակէտէն նայած, նշանակութենէ համարեա զուրկ է. ան անձնութիւն չունի կամ շատ քիչ ունի մեր երկրին հետ : Երկրորդ ծրագիրը նոյնպէս հին է : Տրանսայի զինուորական էնժէնիօր մըն էր ատոր հեղինակը : Առաջարկութիւնն էր Սամսոնը երկաթուղային գծով միացնել Մարգուանի, Եօզղատի եւ այլ տեղերու վրայով Մերսինի հետ :

Այս գիծը բաւական յարաբերութիւն ունի հայու կեանքին հետ, բայց ոչ այնչափ որչափ ետքէն եկող ծրագրերնրը :

Թէ առաջին, թէ երկրորդ ծրագրերնրը յարեւմտական ծրագրի ալ մնացին : Հիմակ ատոնք մեռած կարելի է համարել :

Այսօր հերթական են Յնոր ծրագրերնր, որոնցմէ մին զուտ զինուորական բնաւորութիւն ունի, երկու մնացեալնրը վաճառականական :

Չինուորական ծրագրի հեղինակը կամ թուրք է կամ թուրքիոյ զինուորական ծառայութեան մէջ եղած գերման մը :

Այդ ծրագրերը կառավարէ Գոնիայի կամ Էնիկերիի գիծերէն մին շարունակել Սեբաստիոյ վրայով Երզնկա եւ Կարին, ուստիական օտնձգութիւնները առաջն ատենը համար :

Բայց ո՞վ պիտի գիծերը, վակօնները եւ այլն շինէ, ստակը ո՞վ պի-

տի տայ : Թուրք պետութիւնը : Անիկա իր ապսպրած 8 միլիօն մուղէրեան փամփուշտներու գինը չի կրնար վճարել, երկաթուղու հրէշաւոր ծախքերը ո՛ւսկից վճարէ, իսկ Հայաստանի պէս լեռնոտ երկրի մը մէջ երկաթուղու շինելը զիւրին գործ մը չէ... Եւրոպան համեմատաբար աւելի հարթ ու յարմար երկրներու մէջ անգամ երկաթուղային գծի մը ամէն քիլօմէթրը միջին հաշուով 100,000—150,000 ֆրանքի կը հասնի : Իսկ Հայաստանի մէջ... Ենթադրելով որ ձեռքի աշխատանքը հոս աւելի աժան է, իսկ երկաթը, մեքենաները եւ այլ գործիքներն աւելի սուղ այս երկու պարագայներն իրար կը ջնջեն եւ սեղը կը մնան բաւական բարձր ծախքերը, սր անուազը մէկին կէս կաւելցնեն կառուցման գինը :

Ու այդ ահազին դրամագլուխը պիտի տան Եւրոպայի դրամատէրերը, իսկ անոնք այնչափ ալ անխելք չեն որ չհասկնան, թէ կարինէն մինչեւ Էնիկերի այնքան ալ մեծ արդիւնագործութիւն մը չի կրնար ըլլալ, որ իրենց ծախսերը հազարի դրամագլուխին եւ սովորե տայ, եւ անոր հանգցունելու գումարը (ամօր-գիւրմանը) :

Եւ ահա երբ այդ առաջարկը եղաւ Եւրոպայի դրամատէրերուն, անոնք ուզեցին Տաճիկ կառավարութիւնէն ամէն մէկ քիլօմէթրի համար մինչեւ

75,000 ֆրանք վճար մը եւ երաշխաւորութիւն մը՝ եւ ետքն ալ 99 տարուան միանշանորձը այսինքն՝ իրենք կը շինեն այդ գիծը, եթէ անոր շահագործութիւնը 99 տարուով իրենց արուելի եւ, ատկէ աւելի՝ ամէն մէկ քիլօմէթրին համար ալ 75,000 ֆրանքի. վերջն ալ երբ ժամանակը ցուցնէ, որ ձեռնարկը ֆեսասարէ է՝ իրենք իրաւունք ունենան տալու ամբողջ գործը տաճիկ պետութեան եւ անկէ իրենց գործադրած ամբողջ ծախքն ստանալու :

Պետութիւն մը որ իր աստիճանաւորներու ոտնիկը կը դժուարանայ վճարել չէր կարող առանկ պայմանի մը համաձայնուիլ. ու ծրագրերը՝ զուտ զինուորական գծի մը ծրագրերը՝ փառաւորապէս ջուրն ընկաւ : Հայ դրամատէրեր չեն, որ հետները խաղ խաղար Բ. Դուրը. ասոնք Եւրոպացի դրամատէրեր են, որոնց կոնակէն կերեւայ Պիզմարքներու, Հանթօններու կամ Սօլիդպիլներու ականջները եւ կամ, որ աւելի սարսափելի է Սուլթանի համար, քուրթի թնդանութներու բերանները, եւ մարտանաւերու կայմերը... կատակ ընել անոնց հետ զիւրին բան մէ չէ...

ՉԱՄՔ

(Մնացածը յաջորդով)

այն անձը եղած է, որն որ թէ՛ պարտք դասու երգեցողութեան եղանակէն և թէ՛ իրենց ձեռքը ունեցած «նօթերուն» ներդրանքն էր իրենց գոհ չէ մնացած. բան մը որ թերեւս երկու քին մէջ ալ շատ իրաւունք կրնայ ունեցած ըլլալ. սակայն մենք ատենց մէ առաջինը համար կրնենք թէ՛ Պ. Նարտի ինչ իրաւամբ կատարելութիւն կրնար պահանջել անանկ իմքէ մը, որուն անդամներէն շատ քիչերը դեռ ծանօթ էին ձայնագրութեան: Այսու հանդերձ առաջին անգամ ըլլալով մեր ակնշնչը և (շատ հաւանակաւորէն ժողովրդինը) բաւական ընտելացաւ և գոհ մնաց կիրակնօրեայ եռաձայնէն (ինչպէս մեր դրացի պուլկար ժողովուրդը միշտ գոհ է իրենիցէն): Մեզ համար սա ալ միտմտարկան է որ Պ. Նարտիին սպասած յաջողութեան ու կատարելութեան հասնելու համար շատ երկար մարզանքի ու փորձի ալ պէտք չենք տեսներ:

Կալով Պ. Նարտի երկրորդ պատճառաբանութեան, մենք բնաւ ընելիք չունինք ասոր, բայց եթէ հրապարակաւ թախանձողին խնդրել իրմէ որպէսզի երբ կը խորհի թէ մեր դպրոցը գոտը իր ըրածով գեղարուեստը քարկոծած եղաւ, երբ եռաձայնի մը կարգադրութիւնը աւելի կարող և աւելի ազդանգաւոր մէկու մը պէտք էր թողուլ, յանուն մարդկութեան և յանուն գեղարուեստի պատուոյն՝ բարեհաճի աւելի կօկիկ ու գիտական եռաձայնի մը շինութիւնը ստանձնելով՝ ի հարկին աւելի կանոնաւորապէս կազմակերպելու երգեցիկ խումբ մը պատրաստել:

Գպրոց դաս  
Վառնայի եկեղեցւոյ  
ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիւ 50 «Իրաւունք»-ի մէջ սպաղարուած 16 ստորագրութեամբ նամակի պատասխանը ահաւասիկ:

97-ի յունիս 10-էն ի վեր կը պաշտօնավարեմ քաղաքիս եկեղեցւոյ երաժիշտի պաշտօնը մինչև օրս, որու համար արժանացած եմ ազգայնոց համակրանաց:

Մէկ ու կէս տարի առաջ տեղւոյս երեւելի վաճառականներէն մին ուղեց հայ վարժարանը առ իր զուակները հայերէն սորվելու համար, որպէս զի աղաքը իրենց մատաղ հասակին մէջ չը մտնան մայրենի լեզուն: Վարժարանը իր ձեռքն էր առած տեղւոյս Ղ. Ք. Փափազեանը և իր օրագրոյցին համար սպարանի վերածած 6 տարիէ ի վեր:

Երբ գիմեցինք վարժարանը յանձնելու, նա բոլորովին մեղմեց: Ահա այդ օրէն սկսեալ յիշեալ քահանան իմ պիտուս շատ խաղիւր խաղած:

Ժողովուրդը ինձմէ գոհ է. բոլոր քահանայէն ոչ. որովհետեւ տէրակրթ իր կրօնաւարական պարտականութիւնները լիովին չի կատարեր, ընդհակառակը ժողովուրդը կը հետաքննէ եկեղեցիէն:

Ժողովուրդին ինձմէ գոհ ըլլալուն պատճառաւ է որ մինչև օրս կը պաշտօնավարեմ:

Երաժիշտ  
Թագուր Յիւրմուկեան  
Կալաց, 10 Յունիս

ԶՈՓԱԶԱՆՅՈՒԹԻՒՆԸ ՅԱՐԳԵԼԻ ԶԷ

«Իրաւունք»-ի 58 թուին մէջ պատիւ ունեցանք Պ. Կ. Շարահիւանցի մի յօդուածը կարգաւ «Վառնայի Ընթերցարանը» խորագրին տակ. մենք թէեւ ասկէ գրեթէ 2—3 ամիս առաջ եւս «Իրաւունք»-ի մէջ դարձեալ կարգուցած էինք այսպիսի յօդուած մը, բայց հարկ չէինք տեսած հրապարակաւ պատասխանել, որովհետեւ դա արդէն մեր պարտականութիւնը չէր. հետեւաբար ու է մէկն ալ չէր կարող մենէ հաշիւ պահանջել. քանի որ երկու ընդհանուր ժողովի հրաւիրուած անդամներէն և ոչ մին ներկայ էր եղած. և ընկերութեան վարչական մարմինը տեսնելով ժողովրդեան հենդէպ իրեն ունեցած անտարբերութիւնը, ինքն ալ կէս կաշմալուծեալ վիճակի մէջ մնացած է ցարդ:

Պ. Շարահիւանց կրնէ թէ այդ վիճակը դարմանելու համար պէտք է քիչ մը հասկացողութիւն և քիչ մըն ալ սկսուած գործ մը յարատեւելու կամք և ջանք. լաւ, խիստ լաւ. այդ շատ ճշմարիտ է, բայց պարունը թող հաւատարի ըլլայ որ իրեն գիմացիները բնաւին անհասկացող մարդիկներ չեն, հետեւաբար և ոչ բոլորովին անընդունակ ըմբռնելու յարասեւութեան ոգին: Յիշուի մենք շատեր ունինք որ կը գրեն եռանդով, այլ ախտոս շատ քիչեր ունինք որ կը գործադրեն. պարունը արդեօք ինք ինչո՞ւ համար առաջ չանցնիր. արդեօք միմիայն հեռուէն զիս ողորթութիւններ ընելու համար երիտասարդական աւելն կը կրէ. արդեօք ինչ ըսել կուզէ. իր գրութիւններով քաջալերե՞լ կը կարծէ երիտասարդները: Ձէ՛ պարուն, չէ՛ ձեր դադափարները աւելի լաւ կընէք դուք ձեզի պահեցէք, կարելի է որ օր մը դուք անոնցմէ օգտուիք. մենք շատ լաւ կըմբռնենք թէ ինչո՞վ առաջ չկըթայ ընթերցարանը:

Պ. Շարահիւանց ի վերջոյ մասնաւորապէս իր խօսքը կուղղէ դարձեալ երիտասարդներուն, որք իբր թէ գիտատրուութիւն ունեցած լինին, թերթ մը հանելու. այսպիսի գաղափար և ոչ մի տեղ ծնունդ առած է, իրաց առեալ ընկերական շրջանակէ՞մը, որուն մէջ ինք և ամէնքն ալ կարծիք յայտնած են, բայց միայն այն ատեն գործադրելի լինելու համար, երբ ունենայ ընկերութիւնը շատ նախանձելի վիճակ. և այդ դեռ եւս գաղտնի մնալու համար յայտնուած կարծիք մը հրապարակելու թեթեւատուութիւնը պէտք չէր ունենար այդ պարունը, որ երիտասարդութիւնը լարվ գործունէութեան մը կը հրաւիրէ:

Յիւրմուկեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արքայականներու կողմէն դաւադրութիւն մը կը լայաւարատուեր Ֆրանսական հասարակապետութեան դէմ: Կառավարութիւնը բոլորովին անպատեղի կերպով սկսաւ գաւազ իրներու ձերբակալումը: Շատ մը ազգեցիկ արքայականներ ձերբակալուած են:

Չերբակալուած է նաև հռչակաւոր Տէրուլէտը:

— Տրէյֆուսի դատը կը շարունակուի կանոնաւոր կերպով: Վկաներու մինչև այժմ տուած ցուցմունքները նպաստաւոր են Տրէյֆուսի արգարութեան համար: Մեղադրող ժէնէրալներու վիճակը գէշ կերեւայ:

— Ռուսական թերթերը խիստ կերպով կը յարձակին Սերպիոյ կառավարութեան վրայ և կը շեշտեն որ Միլանի պէս մարդու մը զինուորական զուլի ըլլալը վերտանգաւոր է Սերպիոյ համար թէ ազգային և թէ միջազգային տեսակետով:

— Յունիս 21-ին Աւստրիոյ Սիլիքալաքին մէջ մեծ խռովութիւններ տեղի ունեցած են Չէխերու և գերմանացիներու միջև: Չէխերը և Սլովէները կատաղած գերմանացիներէ պաշարուեցան «Կարօտնի տուճ» կոչուած շէնքին մէջ, Գաւազանի և ատրճանակի կռիւ տեղի ունեցաւ: Կանքանի մը վիրաւորեալներ:

— Հոռովի մէջ անցեալները լուրատարածուած է թէ պապը սաստիկ հիւանդապետ է. թէեւ ճիշդ է որ պապը ոչ մի այցելու ընդունած չէր:

— Չորսմեծ պետութեանց հիւպատոսները բրէնսօթօրթին խորհուրդ տուած են եւրոպական զինուորները ժամանակ մըն ալ պահուի կղզիին մէջ. բրէնսօթ պատասխանած է որ կրետացիները իրենց օրինաւորութեան փաստը տուած են արդէն. տեղական իշխանութիւնը հաստատուելէն ի վեր, ոճրագործութիւն և ուրիշ յանցանքներ շատ սահմանափակուած են. եւրոպական զինուորներու մեկնելէն վերջն ալ վախ մը չկայ, կղզիին ապագայ խաղաղութեանը մասին: Կը կարծուի թէ քանի մը շաբաթէ ետք կղզիին մէջ հատուրպացի զինուոր մնալու չէ:

— Գերմանական թերթերուն Աղէնէն կը հաղորդեն թէ Սուտայի իմամի կողմէն, որ եմէն թուրքերու դէմ կը կուռէր, պատու իրակ մը գացեր է Հընդկաստանի թուրքերու մօտ, խնդրելու որ օգնութեան հասնին եմէնի մէջ ապրող իրենց կրօնակիցներուն, որոնք հազարներով սովէն կը մեռնին:

— «Թայրվո» լրագրի Պոլոյ իղլթակիցը կը հաղորդէ, թէ Ֆրանսական դեսպան Գօնստան

Սուլթանին յայտարարած է որ «երիտասարդ թուրքերուն» պատկանող յայտնի Անմեղիկեանը, որ Երլորդին մեծ անհանգստութիւն կը պատճառէր իր եռանդուն գործունէութեամբ, Ֆրանսայէն աքսորուած է:

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ  
Ա. ՏԱՐԻ

Կազմեց Յ. Կ. ՊՕՆՃՈՒԿԵԱՆ  
Այս պատկերազարդ Գերական-Ընթերցարանը որ մինչև օրս 20 լոյս պիտի տեսնէ, կը յանձնարարուի մասնաւորապէս Պատ. ուսուցիչներու ու շաղրութեան Պատրաստուած է շատ գիւրուստայ մէթոսով և կը պարունակէ բարոյական խրատներ, իրագրական և սոցիալական կանոններ, յոյսով թրեւնէր կարճ և սիրուն պատմութիւններու և անոնցմէն ձեռն առնելով, որոնք գրուած են մանուկներէ հասակնալի լեզուով: Ազգային-պատմական ամենէն նշանաւոր մէկ քանի դէմքերու և զկարծիք վրայ կարճ անդեկութիւններ, քերականական քանի մը գիտելիք, մանկական երգեր և հանելուկներ, ամէնքն ալ ինձմով ընտրուած, պատիկ սոցոց համար շատ հետաքրքրական և հրահանգիչ կը դարձնեն յրթոյլին ընթերցումը:

Գին 60 սանթիմ հատը, զպրոցներու և գոհէ 20 օրինակ գնողներուն համար հարկերին 15 զեղջ, Գիմի կազմողին սա հասցեով՝

J. G. Bondjoukian  
Varna

ԵՓՐՈՍՄԻՆԷ ԹԱՐԱՔՃԵԱՆ

Կը դասախօսէ կանանց վերաբերեալ ամէն տեսակ զգեստ ձեւելու կարելի: Չափաւոր գին:

Փ. Պոլիս. հրապարակ Կնեազ Պօլիս, թիւ 200. 3-4

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՆՈՐԺՈՒՄ

Կը պապը ին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրութեան, հարսանեկան հրաւիրագրի, մահազգ, ինչպէս նաև պրօչիւններ:

Գիները յոյժ գիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՉՆՍՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԿ

Ս. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ  
ԿՕՇԿԱՎԱՐ

Մոսկուա, բաղնիքիցիոյց, Հանի Հասանի օրհիկն ակ:

Ճաշակաւոր, սուր և ձեւաւոր կօշիկ շինելու առ ուղղը պէտք է զիմէ Պ. Սահիան Սօրատանհանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կելլայ:

Գիները խիստ գիւրամատչելի:

Печати на „Взаимность“ Варна.